



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Վարչական գործ ԸԻԴ № 0003/05/14թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան  
Դատավորներ՝

Վարչական գործ ԸԻԴ № 0003/05/14թ.  
Հ.Աբրահամյան  
Հ.Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

11-ին մարտի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով՝

նախագահությամբ՝ դատավոր  
դատավորներ՝

Ի.Կարապետյանի  
Վ.Հովսեփյանի  
Ա.Հայրապետյանի

քննարկելով ըստ հայցի <<ՄԵԾ ԱՆԻՎ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ նաև Ընկերություն/ ընդդեմ ԼՂՀ ֆինանսների նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ վարչական ակտը վերացնելու և Նախարարության հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջների մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի հունվարի 22-ի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման դեմ Ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

## **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Ընկերությունը 2013թ. դեկտեմբերի 23-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Վարչական դատարան/ ընդդեմ ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 2013թ. նոյեմբերի 21-ի թիվ 006997 ստուգման ակտը վերացնելու մասին:

Հակընդդեմ հայցով դիմելով Վարչական դատարան՝ ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը խնդրել է Ընկերությունից բռնագանձել 6.621.800 /վեց միլիոն վեց հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորության գումար:

ԼՂՀ կառավարության 2015թ. հուլիսի 3-ի N417-ն որոշմամբ <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպվել է՝ <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին միացման ձևով:

Վարչական դատարանի 2015թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ ԼՂՀ ֆինանսների նախարարությամբ:

Վարչական դատարանի 2015թ. դեկտեմբերի 1-ի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ դատարանի 2016թ. հունվարի 22-ի որոշմամբ Ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի վերաքննիչ բողոքին կից միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողած ժամկետը հարգելի համարելու մասին, մերժվել է, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերադարձվել:

Գործով 2016թ. փետրվարի 10-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Բողոքը բերվել է դատավարական նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանի 2015թ. դեկտեմբերի 1-ի վճիռն Ընկերությանն ուղարկվել է 2015թ. դեկտեմբերի 8-ին, իսկ Ընկերությունը ստացել է այն դեկտեմբերի 16-ին, որի պարագայում խախտվել է Ընկերության օրենքով սահմանված ժամկետներում վերաքննիչ բողոք բերելու իրավունքը, ինչի հետևանքով Ընկերությունը միայն 2016թ.

հունվարի 15-ին է կարողացել ներկայացնել վերաքննիչ բողոք և դրան կից միջնորդություն՝ բողոքարկման բաց թողած ժամկետը հարգելի համարելու մասին:

Բողոքաբերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է նրանով, որ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի առերևույթ խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016թ. հունվարի 22-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

### **3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտի վճռաբեկության կարգով վերանայումը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վարչական դատարանի 2015թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ գործով դատական նիստը նշանակված է եղել 2015թ. նոյեմբերի 24-ին, որի մասին գրավոր հայտնվել է Ընկերությանը: Վերջինս 12.11.2015 թվակիր գրությամբ միջնորդել է նշանակված դատական նիստը ողջամիտ ժամկետում հետաձգել և հնարավորություն ընձեռել ծանոթանալու գործի նյութերին: Վարչական դատարանը մերժել է միջնորդությունը և գործով կայացված 01.12.2015թ. վճիռը հրապարակել Ընկերության ներկայացուցչի բացակայությամբ: Վճիռի եզրափակիչ մասի համաձայն՝ այն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից 1 /մեկ/ ամիս հետո, որի ընթացքում կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան: Վարչական դատարանի վճիռն Ընկերությունը ստացել է 2015թ. դեկտեմբերի 16-ին և, համաձայն չլինելով դրա հետ, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որին կից՝ նաև բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույց /համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային

հավաստագիրը/, որով հավաստվել է, որ Վարչական դատարանի վճիռն ուղարկվել է 2015թ. դեկտեմբերի 8-ին և Ընկերությունն այն ստացել է 2015թ. դեկտեմբերի 16-ին: Դա փաստվում է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանն Ընկերության վերաքննիչ բողոքին կից միջնորդությունը՝ բաց թողած ժամկետը հարգելի համարելու մասին, մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ «հրապարակվելուց անմիջապես հետո՝ նույն օրը, վճիռը պատվիրված նամակով ուղարկվել է վճռի հրապարակմանը չմասնակցած անձին, ու, թեև, ըստ բողոքաբերի, բողոքարկվող դատական ակտը նա ստացել է միայն 2015թ. դեկտեմբերի 16-ին, այսինքն՝ դատական ակտը հրապարակվելուց 15 օր անց, սակայն, ԼՂՀ վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ակտը բողոքարկվելու համար օրենքով սահմանված ժամկետի մնացած մասը լրիվ բավարար էր վերաքննիչ բողոք բերելու համար»:

Քերագույն դատարանը գտնում է, որ նման եզրակացության հանգելու համար Վերաքննիչ դատարանը բավարար հիմքեր չի ունեցել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական գործողությունների կատարման ժամկետները որոշվում են օրացուցային տարով, ամսով, ամսաթվով՝ անխուսափելիորեն վրա հասնող իրադարձության մատնանշմամբ կամ ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

<<Իրավական ակտերի մասին>> ԼՂՀ օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Նկատի ունենալով, որ ԼՂՀ կառավարության որոշմամբ 2016թ. հունվարի 1-ից մինչև հունվարի 7-ը սահմանվել են ոչ աշխատանքային օրեր, իսկ առաջին աշխատանքային օրը համարվել է հունվարի 8-ը /ուրբաթ օր/, ուստի Վարչական դատարանի 01.12.2015թ. վճռի վերաքննության կարգով բողոքարկման վերջնական ժամկետը լրանում է 2016թ. հունվարի 8-ի ժամը 24-ին:

Ընկերության վերաքննիչ բողոքը և դրան կից միջնորդությունները՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողած ժամկետը հարգելի համարելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, կապի կազմակերպությանն է տրվել 2016թ. հունվարի 15-ին /հատոր 2, գ. թ. 67, 68/:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, այն մասնակիցներին ուղարկելու, առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական

սխալների ուղղման վերաբերյալ դատական ակտի նկատմամբ տարածվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

Այն հանգամանքը, որ Վարչական դատարանի 01.12.2015թ. վճիռն Ընկերությանն ուղարկելու համար կապի կազմակերպություն մուտք է գործել 2015թ. դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ վճռի հրապարակումից 7 օր անց և այն միայն դեկտեմբերի 16-ին հասու է եղել Ընկերությանը, վկայում է, որ Վարչական դատարանի մեղքով խախտվել են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու և դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով, բողոքաբերի համար բողոք բերելու սահմանված ժամկետը, բնականաբար, կարճանում, նվազում է:

Նշված հանգամանքները քննարկելու փոխարեն Վերաքննիչ դատարանն անհիմն եզրահանգել է, որ բողոքաբերի կողմից բաց թողած ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ ներկայացված պատճառաբանությունները՝ միջնորդությունը բավարարելու համար, բավարար չեն: Դա այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց ընդամենը 7 օր հետո:

Վերոգրյալները հիմք ընդունելով՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ երբ բողոքարկման ենթակա դատական ակտն օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ՝ ուշացումով է հանձնվում բողոքարկման իրավունք ունեցող անձին, դրանով իսկ վերջինս զրկվում է օրենքով նախատեսված ժամկետներում համապատասխան բողոք ներկայացնելու հնարավորությունից: Նման դեպքերում բողոքարկման բաց թողած ժամկետների վերականգնման միջնորդությունը քննարկելիս պետք է մանրամասն հետազոտվեն բաց թողնման պատճառները: Եվ բոլոր այն դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով /հիվանդություն, անգրագիտություն, անհաղթահարելի ուժ, դատական քննությանը հարգելի պատճառներով չմասնակցելը, դատական ակտի կայացման օրվա մասին անտեղյակ լինելը և այլն/, ժամկետի բաց թողումը պետք է ճանաչել հարգելի: Դա հավասարապես վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին հանձնելու պատճառով:

Միևնույն ժամանակ, Գերագույն դատարանը նշում է, որ յուրաքանչյուր գործով պետք է նաև քննարկման առարկա դարձվի, թե բողոքարկման ենթակա դատական ակտը բողոք բերելու սահմանված ժամկետը լրանալուց հետո, որքան ժամանակ է

գտնվել բողոք բերելու իրավունք ունեցող անձի տրամադրության տակ և, դատավարական ժամկետների առումով /օրերով հաշվարկված/ այն նշանակալից է, թե՞ ոչ: Բոլոր դեպքերում բաց թողնված ժամկետը վերականգնելու քննարկման հարցում որոշիչը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային պետք է համարվի դատարանի համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն Ընկերության միջնորդությունում նշված փաստարկները հիմնավորող ապացույցներ չներկայացնելու հիմքով միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում սահմանափակել է Ընկերության՝ ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր /պատասխանող/ <<ՄԵԾ ԱՆԻՎ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արամ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի հունվարի 22-ի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշումը վերացնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ \_\_\_\_\_ Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴՍՏԱՎՈՐՆԵՐ՝ \_\_\_\_\_ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

\_\_\_\_\_ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ